

Ապահովագրական ընկերությունների գործարար շրջանառության սովորույթ



Համաձայն «Ֆինանսական համակարգի հաշտարարի մասին» ՀՀ օրենքի (հոդված 14, 3-րդ կետ)՝ Հաշտարարը որոշում կայացնելիս հաշվի է առնում ոչ միայն ՀՀ օրենսդրության պահանջները, այլև գործարար վարքագծի և էթիկայի կանոնները, գործարար շրջանառության սովորույթները: Ֆինանսական համակարգի հաշտարարի սահուն գործունեությունն ապահովելու, ինչպես նաև անհրաժեշտության դեպքում գործարար շրջանառության սովորույթը կիրառելու նպատակով Հաշտարարի գրասենյակը հարցում է կատարել ՀՀ տարածքում գործող բոլոր ապահովագրական ընկերություններին՝ կապված ապահովագրական դեպքերի մասին անուցում ստանալուց հետո ապահովագրական ընկերության կողմից ապահովագրական հատուցում տալու կամ հատուցումը մերժելու մասին որոշման կայացման ժամկետների վերաբերյալ: Գրասենյակը ապահովագրական ընկերություններին խնդրել է պարզաբանել՝

ա) Ի՞նչ ժամկետում են ընկերությունները պարտավոր ձեռք բերել բոլոր անհրաժեշտ փաստաթղթերը:

բ) Ի՞նչ ժամկետում են ընկերությունները պարտավոր վերջնական որոշում կայացնել ապահովագրական հատուցման վերաբերյալ, որպեսզի հնարավորինս չխախտվի ապահովագրական հատուցում ստանալու ապահովադրի իրավունքը:

Բանն այն է, որ որոշ ընկերությունների ներքին կանոնակարգերում սահմանված է կոնկրետ ժամկետ, որը, սակայն, սկսում է գործել ընկերության կողմից բոլոր անհրաժեշտ փաստաթղթերը ստանալուց հետո, իսկ թե ինչ ժամկետներում են ընկերությունները պարտավոր ձեռք բերել բոլոր անհրաժեշտ փաստաթղթերը և վերջնական որոշում կայացնել ապահովագրական հատուցման վերաբերյալ: Բոլոր ապահովագրական ընկերությունների կողմից տրված բացատրություններն ու պարզաբանումները հանգել են հետևյալին՝

ա) Գրեթե բոլոր ընկերություններում գործող ներքին կարգերի համաձայն՝ անհրաժեշտ փաստաթղթերի ձեռքբերման պարտականությունը դրված է ապահովադիրների վրա: Ըստ ընկերությունների՝ սա բխում է երկու կողմից շահերից էլ, քանի որ այն ապահովադիրներին պարտավորեցնում է արագ ձեռք բերել անհրաժեշտ փաստաթղթերը և

ձեռնպահ մնալ անտեղի ձգձգումներից: Ընկերությունները միայն իրենց հայեցողությամբ կամ առանձին դպքերում անհրաժեշտությունից ելնելով կարող են ներգրավվել գործընթացին:

բ) Ապահովադրի և ընկերության միջև կնքված ապահովագրական պայմանագրերով կամ, որ ավելի շատ է հանդիպում, դրանց անբաժանելի մասը կազմող ապահովագրության համապատասխան դասերի համար սահմանված Պայմաններով հստակ սահմանվում են այն փաստաթղթերի ցանկը, որը ապահովադիրը պարտավոր է ներկայացնել ընկերությանը: Որոշ ընկերությունների կողմից, սակայն նշվում է նաև «Այլ փաստաթղթեր» հասկացությունը, ինչը ընկերությանը հնարավորություն է տալիս անհրաժեշտության դեպքում պահանջել նաև լրացուցիչ հիմնավորող փաստաթղթեր:

գ) Գալով անհրաժեշտ փաստաթղթերի ձեռքբերման ժամկետներին, պետք է նշել, որ որոշ ընկերությունների կողմից կարծիք է հայտնվել, որ որևէ գործարար սովորույթով կամ օրենսդրական նորմով չի կարող սահմանափակումներ դրվել ընկերության վրա անհրաժեշտ փաստաթղթերը ձեռք բերելու համար: Որոշ ընկերություններ, մեջբերելով ՀՀ Քաղաքացիական օրենսգրքի հոդված 1000¹-ի 3-րդ կետով ապահովագրական ընկերություններին վերապահված ապահովագրական պատահարի հանգամանքներն անձամբ քննելու իրավունքը, նշում են, որ հետաքննություն կատարելու արդյունքում ապահովագրական հատուցում տալու կամ հատուցումը մերժելու մասին վերջնական որոշման կայացումը կարող է հետաձգվել անորոշ ժամկետով: Մյուսները գտնում են, որ փաստաթղթերի հավաքագրման ժամկետները կախված չեն ընկերություններից, քանի որ որոշ դեպքերում ապահովագրական հատուցում տալու համար պահանջվող փաստաթղթերի ցանկում կարող են առկա լինել այնպիսի փաստաթղթեր, որոնք տրվում են կոնկրետ դեպքի հետ կապված համապատասխան իրավասու մարմինների կողմից, և քանի որ վերջիններիս կողմից այդ փաստաթղթերը տրվում են տարբեր ժամկետներում, ապա ապահովագրական ընկերությանը հնարավորություն չի ընձեռնվում սահմանել փաստաթղթերի հավաքագրման հստակ ժամկետ՝ ելնելով ապահովադրի շահերից, քանի որ հակառակ դեպքում ապահովագրական ընկերության կողմից փաստաթղթերի հավաքագրման հստակ ժամկետ սահմանելիս և ապահովադրի կողմից այդ ժամկետներում փաստաթղթերը չներկայացնելիս ապահովագրական ընկերությունը կարող է մերժել ապահովագրական հատուցումը:

Այնուամենայնիվ, պետք է նշել, որ ապահովագրության տարբեր դասերի համար ապահովագրական ընկերությունների կողմից սահմանված ապահովագրության

պայմաններով տարբեր ապահովագրական դասերի համար նախատեսված են փաստաթղթերի ստացման հստակ ժամկետներ, որոնք, կախված ապահովագրության դասից, տատանվում են 15 օրից մինչև 2 ամիս: Օրինակ՝ տրանսպորտային միջոցների ապահովագրության դեպքում անհրաժեշտ փաստաթղթերի ստացման համար 5 ապահովագրական ընկերությունների ներսում գործող Պայմաններով սահմանված է երկամսյա ժամկետ:

դ) Ապահովագրական ընկերությունը վերոհիշյալ պայմաններում սահմանված ամբողջական փաստաթղթերը ստանալուց հետո 5 աշխատանքային օրվա ընթացքում կայացնում է պատճառաբանված որոշում՝ ապահովագրական հատուցում վճարելու կամ հատուցում տալը մերժելու վերաբերյալ: Այսպիսով, կարելի է նշել, որ մեր կողմից առաջադրած հարցի վերաբերյալ ապահովագրական ընկերությունների շրջանում չի գործում գործարար շրջանառության սովորույթ, քանի որ տարբեր ընկերությունների կողմից հարցի վերաբերյալ դրսևորվել են տարբեր մոտեցումներ: